*կուցումը և որոշուել է յատուկ մասնագէտի և տեղական հոգևոր իշխանութեան ղեկավարութեամբ ամբողջ Թեմի մանրամասն և ճշգրիտ ինվենտար կազմել, թարգմանել տալ այդ ինվենտարը եւրոպական լեզուներով և ուղարկել այն ընկերութիւններին, որոնք դիմել են և առաջարկել իրանց պայմանները օգտուելու Թեմի կալուածներից։—«Արարատի» մէջ կաշխատենք մանրամասն տեղեկութիւն տալ այդ շահեկան ցուցագրի մասին։*

**ՊՈՍՏԱՐԿՂ.**

Մոսկվա *Էմ. Ք. Նազարեանին. «Պրաւոսլաւ եկեղեցու հայեացքը հայ եկեղեցու վրայ»—թարգմանութիւնը ուղարկուեց Ձեզ. իսկ «Տնավարի կտակը» լոյս կըտեսնի յաջորդ համարում*

Կախ Աւան *Թադ. Աւգալբէկեանին. «Հողի միշտը» Ձեր գրածի համաձայն յանձնեցինք Վ. Փոթէյեանին։*

Կարս *Ա. Օլթեցեանին. «Հայրենագիտութեան նիւթի մշակումը» ցաւօք սրտի չենք կարող տպել յօդուածի երկարութեան պատճառով։ Յօդուածը Ձեզ յետ ուղարկեցինք։*

Ն. Նախիջեւան *Հր. Աճառեանին. Ձեզ նամակ գրուեց «Դաղթականութիւնը» յօդուածի մասին։*

| | | |
|---|---|---|
| Թիֆլիզ | *Կարապետ Ղազարեանին* | *Ձեն տպուի Ձեր ուղարկած յօդուածներն ու ոտանաւորները, նաև թարգմանութիւնները.* |
| Էջմիածին | *Անուրջին* | |
| Ն. Նախիջ. | *Նիկ. Ք. Բռնակեանին* | |
| Գանձակ | *Ն. Ուշաունուն* | |

Տաւրիզ *Մարկոս քհնյին. «Կրօնուսոյցի զրոյցները» և «Փոքրիկ եկեղեցի» չեն տպուի, իսկ «Զրոյցներից Աստուծոյ և նրա արդարութեան մասին» շնորհակալութեամբ կտպուենք «Արարատի» համար։*

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

1. Pessimist-*ի կազմած «Փորձնական մանկավարժութեան արդիւնքները, ըստ պրոֆ. Մէյմանի.* 1911 *թ. Էջմ. գինն է* 30 *կ.*

2. *Կարէն Միքայէլեան. Զրկանքի յոյզեր Թիֆլ.* 1907 *թ. գինն է* 50 *կ.* 212 *էջ.*

3. *Կ. Միք. Զմրան երեկոյ Մոսկվա* 1912 *թ. գ.* 60 *կ.* 151 *էջ.*

4. *Ազգագրական հանդէս* 1911 *թ.* XXI *գիրք.*